

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №3-4 (28-29) 2016 Гуманитарные науки

ՀՏԴ 811.133.1

ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ԴԻԱԿՐԻՏԻԿ ՆՇԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ
ՕՐԻՆԱԶՄՓՈԻԹՅՈՒՆՆԵՐԸ

Մ. Զ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Ա.Ա. ՄԱՐԴԱՆՅԱՆ
Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ,
4001, Իջևան, Ուսանողական 3
e-mail:myrakarapetian@rambler.ru

Հոդվածում քննարկված է ֆրանսերենի դիակրիտիկ նշանները, որոնց գործածությունը գրավոր խոսքում ամենադժվար յուրացվող թեմաներից է: Քանի որ չկան նրանց կիրառության վերաբերյալ միանշանակ կանոններ, մենք համակարգված ձևով ներկայացնում ենք դիակրիտիկ նշանների կիրառության օրինաչափությունները՝ հեշտացնելու համար տվյալ նյութի յուրացումը ֆրանսերեն ուսումնասիրողների համար:

Բանալի բառեր. լեզվաբանություն, ֆրանսերենի քերականություն, դիակրիտիկ նշաններ, ստուգաբանություն, հնչյունաբանություն

Ներկայացված է խմբագրություն 25.02.2016թ.

Ֆրանսերենում գոյություն ունեն հինգ դիակրիտիկ նշաններ, որոնցից յուրաքանչյուրը որոշակի ներգործություն է ունենում արտասանության վրա՝ accent circonflexe, accent grave, accent aigu, cédille, tréma: Այս նշանների կիրառությունը գրավոր խոսքում նշանակալից դժվարություն է ներկայացնում ֆրանսերեն սովորողների համար, քանի որ չկան նրանց գործածության վերաբերյալ միանշանակ կանոններ, սակայն գործում են որոշակի օրինաչափություններ և միտումներ:

Հին ֆրանսերենում դիակրիտիկ (տարբերակիչ) նշաններ չեն եղել: Քերականագետները և հրատարակիչները կանոնավոր կերպով սկսել են դրանք կիրառել Վերածննդի դարաշրջանում: Accents և tréma նշանները փոխառվել են հունարենից, իսկ cedille-ը՝ իսպաներենից: Այս նշանների գործածությունը գրավոր խոսքում բացատրվում էր հնչյունը ճիշտ արտասանելու, ինչպես նաև ստուգաբանության տեսակետից բառի ուղղագրությունը հստակեցնելու անհրաժեշտությամբ՝ *esteile* – *étoile*; *testa* – *tête*: Դիակրիտիկ նշանները անհրաժեշտ միջոց էին նաև նույնագրերը (homographes) տարբերակելու համար՝ *a* – *à*; *ou* – *où*:

Accents-ը դիակրիտիկ նշաններ են, որոնք դրվում են ձայնավորների վրա՝ նրանց բնույթը ճշտելու, ինչպես նաև հնչյունի ծագումը և նույնագիր բառերը տարբերակելու համար:

Ֆրանսերենի համապարփակ քերականության դասագրքի հեղինակ Մորիս Գրեվիսը [1, էջ 49] նշում է, որ accent circonflexe-ը գործածության մեջ է դրել Յակոբուս Միլվիուսը 1530թ.՝ դիֆտոնգները առանձնացնելու նպատակով: Ավելի ուշ այլ քերականագետներ և հրատարակիչներ սկսեցին այս նշանը օգտափորձել *e* և *s* հնչյունների անկումը բառամիջում ցույց տալու համար՝ *vrai* *ˆ*ment, *pai* *ˆ*ra, *to* *ˆ*t, *tou* *ˆ*jours, և այլն: Accent circonflexe-ի այսպիսի գործածությունը, որոշ վերապահումներով հավանության արժանացավ Ֆրանսիական Ակադեմիայի կողմից և արտացոլվեց Ակադեմիական Բառարանի 3-րդ և 4-րդ

հրատարակություններում [2, 3], ընդ որում Ակադեմիան պարզեցրեց *participle passé*-ն՝ վերացնելով *accent «circonflexe»*-ը *u*-ի վրայից՝ *vu, reçu, փոխանակ՝ vû, reçû*։

Ժամանակակից ֆրանսերենում *accent circonflexe*-ը դրվում է բոլոր ձայնավորների վրա, բացառությամբ՝ *y*-ի, ընդ որում, երբեմն նա փոխում է ձայնավորի արտասանության բնույթը, երբեմն՝ ոչ։ *Accent circonflexe*-ը գործածվում է հետևյալ դեպքերում։

1. Արտահայտելու համար հնչյունի բնույթի փոփոխություն, այսինքն, հնչյունի երկար արտասանություն՝ *s*-ի անկման (*chute*) կամ հին ուղղագրության մեջ երկու ձայնավորների միաձուլման հետևանքով. օրինակ՝ *tête (teste); âge (eage կամ aage); sœur (seur)*։ Ի դեպ, ժամանակակից ֆրանսերենում *accent circonflexe*-ով ձայնավորը որոշ դեպքերում կարող է արտասանվել նաև կարճ, օրինակ՝ *prêt-[pre]*, բայց *accent circonflexe*-ի առկայությունը ձայնավորի վրա ցույց է տալիս, որ նրան հաջորդող տառն ընկել է։ Ուսումնասիրելով ֆրանսերեն միարմատ կամ միևնույն նշանակությամբ բառեր եվրոպական այլ լեզուներում, կարելի է բացահայտել նրանց ստուգաբանությունը և նրանցում *accent circonflexe*-ի առկայությունը։ Օրինակ՝

Fête – festival; фестиваль; Fest (գերմ.)

Forêt – forestier; forest (անգլ.)

Île – isle, island (անգլ.); Insel (գերմ.)

Août – august (անգլ.); август; August (գերմ.)

Pâte – pastille; паштет; Pastete (գերմ.)

2. Տարբերակելու համար նույնագիր բառերը (*homographes*)՝ *du – dû; cru – crû; je crois (croire) – je crois (croître)*։

3. Համապատասխան նրբերանգ տալու լատինական և հունական ծագում ունեցող որոշ բառերի մեջ ձայնավորի արտասանությանը՝ *cône, diplôme, infâme, extrême*։ Սակայն պետք է նշել, որ միարմատ բառերում *accent circonflexe*-ը կարող է ընկնել կամ փոխարկվել *accent aigu*-ի։ Որպես կանոն, այս դեպքում փոխվում է վանկի բնույթը և, հետևաբար, հնչողությունը՝ *cône – conique; grâce – gracieux; extrême – extrémité*։

4. Որոշ դեպքերում *accent circonflexe*-ը դրվում է համանմանությամբ (*analogie*)՝ (*coûte (couste) – vouûte; maître (maistre) – traître; vous chantâtes (vous chantastes) – nous chantâmes*։

5. Որոշ սակավաթիվ բառեր ունեն գրության երկու տարբերակներ՝ *accent circonflexe*-ով և առանց։ Այդ բառերում «*^*» նշանը ցույց է տալիս, որ *té* և *ment* վերջածանցներով կազմվող բառերի մեջ համը *e*-ն ընկել է՝ *gaieté – gaîté; remerciement – remerciement; dévouement – dévoûment*։

Վերոնշյալ կանոնների վերլուծությունը ցույց է տալիս, որ *accent circonflexe*-ի գործածությունը պայմանավորված է մի շարք գործոններով՝

1) ստուգաբանական. ցույց է տալիս, որ մի ժամանակ այդ ձայնավորից հետո ևս մի տառ է եղել

2) հնչյունաբանական. արտահայտում է ձայնավորի երկար արտասանությունը և ձայներանգի փոփոխությունը

3) տարբերակիչ. տարբերակելու համար նույնագիր բառերը

4) ձևաբանական. բառակազմության որոշ տեսակներում գործածվելը

Accent grave-ը [1, էջ 49] կիրարկվել է XVI դարում։ Յ. Միլվիուսը այն դնում էր համը *e*-ի և անկման ենթակա *e*-ի վրա՝ *grâce, vêtement (grâce, vêtement)* և այլն։ Ակադեմիական Բառարանի 3-րդ հրատարակության մեջ *accent grave*-ը դրվում էր բառի վերջին կամ նախավերջին վանկի բաց *e*-ի վրա՝ *après, entière* և այլն։ Ժամանակակից ֆրանսերենում *accent grave*-ը դրվում է *a, u, e* ձայնավորների վրա և գործածվում է հետևյալ դեպքերում։

1. գրությամբ բաց, իսկ հնչողությամբ՝ փակ վանկում գտնվող *e*-ի վրա, որին հաջորդում է.

a) համար **e`** *mère, sèche, collègue, règle, crème, fève, père, frère*, (բացառությամբ **x**-ի, որից առաջ accent grave չի դրվում *reflexe, complexe, circonflexe*).

b) անկման ենթակա **e (e caduc)**: *complètement, pèlerine, concrètement*.

2. **ès**-ով վերջացող բառերի խմբում *près, très, progrès, succès, congrès, accès, procès, excès, auprès*.

3. նույնագրերի տարբերակման համար *à – a; là – la; ça – ça; où – ou*.

4. հետևյալ բառերում *deçà, delà, voilà, déjà, ինչպես նաև` là-bas, là-haut` և այլն` (բացառությամբ` cela)*:

Երբեք accent grave չի դրվում կրկնակ բաղաձայներից առաջ փակ վանկում *actuelle, nouvelle, appelle, visuelle, spirituelle*:

Ամփոփելով վերոնշյալը, առանձնացնում ենք accent grave-ի գործածության երկու գործոնները, որոնք են`

1) տարբերակիչ. դրվում է **a** և **u** ձայնավորների վրա` տարբերակելու համար նույնագրերը (homographes).

2) հնչյունաբանական. դրվում է **e**-ի վրա` արտահայտելու համար արտասանության բնույթը, այն է` **è**-ը արտասանվում է բաց – [ɛ]:

Accent aigu-ն [1, էջ 50], որը կիրարկվել է 1958թ., սկզբում դրվում էր բառավերջի փակ **e**-ի վրա, իսկ XVII դարում այն դրվում է նաև բաց **e**-ի վրա` *après (après), dés (dès)* և այլն: Ակադեմիական Բառարանի 7-րդ հրատարակությունում [4] accent aigu-ն փոխարինվում է accent grave-ով այնպիսի բառերում, ինչպիսիք են` *piège, siège (նախկինում` piège, siège)* և այլն:

Ժամանակակից ֆրանսերեն լեզվում accent aigu-ն գործածվում է հետևյալ դեպքերում.

1. Գրությամբ և հնչյունաբանորեն բաց վանկում *vérité, égalité, allée, armée, clé, fée, fédéré*: Սակայն չի կարելի մոռանալ, որ accent aigu-ն միշտ չի դրվում ցանկացած բառի բաց վանկի **e**-ի վրա` *degré, rechercher, regarder, prenez, premier* և այլն: Երբեմն **é** հանդիպում է բառի վերջին վանկում, հնչյունաբանորեն` բաց, գրությամբ` փակ վանկում, օրինակ` *coupés*: Սակայն, եթե վանկը ավարտվում է չարտասանվող **d, r, f, z** բաղաձայներով, ապա accent aigu չի դրվում, թեև հնչյունի բնույթը նույնն է, օրինակ` *pied, aimer, clef, venez*.

2. Որպես մասնակի դեպք, պետք է առանձնացնել **é**-ով սկսվող այն բառերը, որոնք ինքնուրույն վանկ են համարվում: Այստեղ միշտ գործածվում է accent aigu, քանի որ ֆրանսերենում բառը չի կարող սկսվել [ə] հնչյունով: Օրինակ` *église, épine, épater, étage, étape*: Լատիներենում այս բառերից շատերը սկսվում էին բաղաձայնով, հետո ստանում էին սկզբնամասի **e**, հետագայում բաղաձայն ընկնում էր, փոխելով վանկի բնույթը և **e**-ն փոխարկվում էր **é**-ի:

Օրինակ` *scola – escola – école; studere – studier – étudier; steile – estelle – esteile – étoile; stabiliere – établir – établir*

Տարբեր accents-ի հերթագայությունը պայմանավորված է հնչյունի բնույթի փոփոխությամբ, որը տեղի է ունենում բառակազմության և ուղղագրության փոփոխության արդյունքում:

1. Հերթագայություն միարմատ բառերում` *nègre – négresse; poète – poétique; extrême – extrémité*: Երբեմն միարմատ բառերում accent-ը անհետանում է` *sûr – assurer; grâce – gracieux; cône conique*:

2. **è**-ի և **é**-ի հերթագայությունը առաջին խմբի բայերի սահմանական ներկայի և ըղձական ներկայի եզակի թվի բոլոր դեմքերում և հոգնակի թվի երրորդ դեմքում, ինչպես նաև հրամայական ներկայի եզակի թվի երկրորդ դեմքում: Օրինակ` *répéter* բայի խոնարհումը.

Présent de l'indicatif

Présent du subjonctif

Impératif

<i>je répète</i>	<i>nous répétons</i>	<i>je répète</i>	<i>nous répétions</i>	<i>répète!</i>
<i>tu répètes</i>	<i>vous répétez</i>	<i>tu répètes</i>	<i>vous répétiez</i>	<i>répétons!</i>
<i>il répète</i>	<i>ils répètent</i>	<i>il répète</i>	<i>ils répètent</i>	<i>répétez!</i>

Նույնը վերաբերում է *modérer, accélérer, pénétrer, préférer, célébrer* բայերին:

3. I խմբի բայերում **e caduc**-ի հերթափոխումը **è**- ուղ: Օրինակ՝ *acheter*

Présent de l'indicatif		Présent du subjonctif		Impératif
<i>j'achète</i>	<i>nous achetons</i>	<i>j'achète</i>	<i>nous achetions</i>	<i>achète</i>
<i>tu achètes</i>	<i>vous achetez</i>	<i>tu achètes</i>	<i>vous achetiez</i>	<i>achetons</i>
<i>il achète</i>	<i>ils achètent</i>	<i>il achète</i>	<i>ils achètent</i>	<i>achetez</i>

Նույնը վերաբերում է նաև *se promener, peler, semer, lever, mener* և նմանատիպ մյուս բայերին:

Ինչպես նշվեց, *cédille* [1, էջ 51] տերմինը իսպանական փոխառություն է, որը գործածության մեջ է դրել հրատարակիչ Ժոֆրուա Տորին: Իսպաներենում *cedilla* նշանակում է փոքր **z**: Սկզբում այն պարզապես փոքր **z** էր՝ **c**-ի տակ դրված և փոխարինում էր **sz** և **ce** միացություններին՝ *fuszon – façon; il receoit – il reçoit* և այլն:

Ժամանակակից լեզվում *c* *cédille*-ը հիմնականում նույնն է մնացել: Այն դրվում է **a, o, u** ձայնավորներից առաջ և արտասանվում է [s], այսինքն՝ նրա գործածությունը պայմանավորված է հնչյունական գործոններով, որոնք մենք պայմանականորեն բաժանել ենք երկուսի:

1. *c* *cédille*-ը գտնվում է բառի հիմքի վերջում՝ վերջավորությունից առաջ և բառակազմության փոփոխության արդյունքում փոխարկվում է **c**- ի:

Օր.՝ *recevoir – reçu; placer – nous plaçons; commencer – il commença*.

2. *c* *cédille*-ը գտնվում է բառահիմքի ներսում՝ արմատի և վերջածանցի միջև և համապատասխանում է միարմատ բառերի **c**-ին:

Օր.՝ *français – France; façade – face; garçon – garce; gerçure – gercer* և այլն:

Tréma նշանը հունական փոխառություն է, որը գործածության մեջ է դրվել Յակոբուս Միլվիուսի կողմից 1931թ.: 1878թ., Ֆրանսիական Ակադեմիայի որոշմամբ, այն փոխարինվեց *accent grave*-ով այնպիսի բառերում, ինչպիսիք են՝ *poète, poème (poëte, poëme)* և այլն:

Ժամանակակից ֆրանսերենում *tréma* նշանը դրվում է **e, i, u** ձայնավորների վրա՝ ցույց տալու համար, որ նրանք արտասանվում են անկախ հարևան ձայնավորից, այսինքն՝

a) կամ միմյանցից բաժանում են դիֆտոնգը՝ *Moïse, haïr, prosaïque, ambiguïté*;

b) կամ բառակազմության փոփոխության դեպքում պահպանում են արտասանությունը՝ *aiguë, ambiguë, exigüe, contiguë*. Որոշ հաստուկ անուններում *tréma* նշանը դրվում է չարտասանվող **e**-ի վրա՝ *Saint – Saëns, Mme de Staël*.

Հարկ է նաև նշել, որ դիակրիտիկ նշանները՝ բացառությամբ *cédille*-ի, չեն դրվում մեծատառերով գրված թերթերի վերնագրերում, գովազդներում և այլն: Օրինակ՝ *L'HUMANITE, COMEDIE FRANÇAISE, L'HOTEL DE VILLE*: Չեն դրվում նաև տեքստերում՝ մեծատառերի վրա, բացառությամբ հաստուկ անունների, ինչպես օր.՝ *États – Unis, Saint – Étienne, Île – de – France*, որոնց մեջ *accents*-ը կարող են և՛ լինել, և՛ չլինել՝ *Etats – Unis, Saint – Etienne, Ile – de – France*:

Ամփոփելով նշենք, որ կատարված հետազոտության արդյունքում ուումնասիրվել են ֆրանսերենի դիակրիտիկ նշանների առաջացման և զարգացման պատմությունը, դրանց գործածությունը պատմական տարբեր դարաշրջաններում և համակարգվել են դրանցում գոյություն ունեցող օրինաչափություններն ու միտումները: Բերված օրինակները, ինչպես նաև նյութի հայերեն բացատրությունը, կարող են հիմք հանդիսանալ՝ յուրացնելու և ամրապնդելու դիակրիտիկ նշանների գործածությունը գրավոր խոսքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Grevisse M. Le bon usage. Grammaire française, 10^e éd., Belgique, 1975.
2. Dictionnaire de l'Académie française. 3^e éd., Paris, 1740.
3. Dictionnaire de l'Académie française. 4^e éd., Paris, 1762.
4. Dictionnaire de l'Académie française. 7^e éd., Paris, 1878.

РЕЗЮМЕ ЗАКОНОМЕРНОСТИ УПОТРЕБЛЕНИЯ ФРАНЦУЗСКИХ ДИАКРИТИЧЕСКИХ ЗНАКОВ

М.З. КАРАПЕТЯН, А. А.МАРДАНЯН

Во французском языке существуют пять диакритических знаков, каждый из которых влияет на произношение: accent circonflexe, accent grave, accent aigu, cedille, tréma. Употребление этих знаков в письменной речи представляет заметную трудность для изучающих язык, поскольку безусловных правил их употребления не существует; можно отметить определенные закономерности и тенденции их применения. В статье систематизированы соответствующие языковые явления и даны некоторые рекомендации, которые могут облегчить овладение этим материалом.

SUMMARY REGULARITIES OF THE USAGE OF DIACRITIC SIGNS IN FRENCH *M. Z.KARAPETYAN, A. A.MARDANYAN*

The present article touches upon the diacritic signs in French, each of which has a certain influence on pronunciation: accent circonflexe, accent grave, accent aigu, cedille, tréma. Non-native speakers find these signs difficult to use in writing as there aren't any certain rules for their usage but only some regularities and tendencies. We have tried to systematize some linguistic phenomena in this article and make some recommendations to make the process of mastering this material more available.